

Ո՛հն մեծագլխի,
 տեղեաւ դովելի եւ անւանելի,
 սուրբ ուխտին Ստաթէի
 եւ մենարանի
 սրբոյն Գրիգորի.
 ի վերջս ժամանակի
 սորին վիճակի
 տունի բուսեալ լինի
 յարմատոց տեղի
 սրբոյն Ստաթէի
 ծառ զարմանալի
 ոստ բազում ունի
 միշտ պտղաբերի:

Մնողաց անունները չէ հասցուցած մեզի ժամանակը. կը յիշատակուի միայն քոյր մը, որուն միակ ծանօթ զաւակը՝ Մովսէսի «քեռորդին»՝ եղաւ Գրիգորիս «կրօնաւոր բանասէրը», համամանն իւր մօրեղբօր՝ «առաքինի եւ ճգնաղգեաց եւ խստակրօն վարքովը»³: Մովսէսի «ազգական եւ մօտընտի» եղած է նաեւ Տաթեւի Յովհաննէս արքեպիսկոպոսը. 1635ին Սարգիս գրիչ⁴ կը խնդրէ. «յիշեսձիք զստացօղ գրոցս Յովաննէս արհիեպիսկոպոսն ի յաթոռն Ստաթէի, որ էր սա աղղական եւ մօտընտի Մովսէս կաթողիկոսին, որ եւ ձեռնադրեաց եւ կացոյց զսայ ի սուրբ Աթոռս»:

³ Ձեռ. Էջմ. Թ. 1099:

⁴ Ձեռագիրը օրինակուած է «ի յերկրիս Էճանան, ի գեաւդս Խոտանան, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ձեռամբ անիմաստ Սարգիս աշխարհականի»:
 Էջմ. 2635 (Կանոնագիրք):